

Փարիզի մէջ տեղի ունեցաւ Սփիւռքի ազգային զօրաշարժի խորհրդածողովը



Շաբաթ, 11 եւ կիրակի, 12 ապրիլ 2026-ին, Փարիզի մէջ տեղի ունեցաւ Սփիւռքի զօրաշարժին նուիրուած խորհրդածողով մը, որուն մասնակցեցան 25 երկիրներէ շուրջ 150 ներկայացուցիչներ՝ համայնքային եւ եկեղեցական ղեկավարներ, կազմակերպական պատասխանատուներ, հանրային-քաղաքական գործիչներ, մասնագէտներ եւ երիտասարդներ: Խորհրդածողովին նպատակն էր հաւաքաբար քննարկել վերջին տարիներուն հայկական աշխարհը ցնցած տագնապները եւ ձեւաւորել աւելի համախմբուած ու նպատակաւոր կեցուածք՝ ի նպաստ Հայաստանի, Սփիւռքի, համազգային շահերուն եւ Հայ Դատին:

Բացման խօսքը արտասանեց կազմակերպող յանձնախումբի պատասխանատուներէն, ՀՅԴ Բիւրոյի անդամ Յովսէփ Տէր Գեորգեան, որ շեշտեց, թէ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն մէջ ստեղծուած է մտահոգիչ վիճակ մը, ուր կազմակերպուած Սփիւռքի տասնամեակներու վաստակը կը նսեմացուի, եւ կը վտանգուի հաւաքական ուժականութիւնը: Ան ընդգծեց, որ այս ընթացքը ոչ միայն չի նպաստեր համագործակցութեան, այլ նաեւ կը խորացնէ յուսալքութիւնը, կը թուլացնէ վստահութիւնը Հայաստանի պետութեան հանդէպ, կը խախտէ համայնքային համախմբումը եւ ինքնութեան ճգնաժամ կը ստեղծէ: Իր խօսքին մէջ ան շեշտեց նաեւ, որ ներկայ պահը այլեւս միայն տեսական քննարկումներու ժամանակ չէ, այլ պահանջ կը դնէ, որ Սփիւռքը հանդէպ գոյ որպէս լիարժէք քաղաքական եւ կազմակերպուած ուժ, ոչ միայն հակադրուի վտանգներուն, այլ նաեւ ապագայակերտ շարժում մը դառնալու:

Խորհրդածողովը սկսաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.-ի ուղերձներով: Ապա խօսք առին Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ եւ նախագահի պաշտօնակատար Աշոտ Դանիէլեանը եւ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեանը:

Առաջին կտր սեղանը նուիրուած էր Սփիւռքի ուղղափարական դերին եւ անոր քաղաքական օրակարգին: Քաղաքագէտ Վահան Զանոյեան դիտել տուաւ, որ վերջին տասնամեակներու փորձը ցոյց կու տայ, թէ հայ պետականութիւնը միշտ չէ, որ պատրաստ եղած է պաշտպանելու համազգային շահերը, եւ հետեւաբար ազգը պէտք է իր լրացուցիչ օրակարգը ձեւաւորէ՝ ոչ թէ իբրեւ պետութեան մրցակից, այլ իբրեւ անոր զօրավիգ ուժ: Արցախի Մարդու Իրաւունքներու պաշտպան Գեղամ Ստեփանեան ընդգծեց, որ Սփիւռքը պէտք է դրօշակիրը դառնայ Արցախի հարցը միջազգային աստիճաններու վրայ հետեւողականօրէն պահելու աշխատանքին: Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի պատասխանատուներէն Եղիսաբէթ Չուլճեան Սփիւռքը բնորոշեց որպէս հայ ազգի աշխարհաքաղաքական ուժն ու «երկրորդ բանակը», շեշտելով Հայ Դատի համաշխարհային ցանցի նշանակութիւնը հայկական շահերու պաշտպանութեան մէջ: Գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդի ատենապետ Ճօնաթան Շպանգեան պերկարութեան պահանջը ներկայացուց որպէս ազգային եւ համամարդկային կեդրոնական առաքելութիւն, իսկ ՀՅԴ Հայ Դատի Կեդրոնական Գրասենեակի պատասխանատու Կիրո Մանուկեան խօսեցաւ սփիւռքի հաւաքական քաղաքական կամքը ձեւաւորելու եւ գոյն Հայաստանի քաղաքական օրակարգին մէջ ներդրելու անհրաժեշտութեան մասին, յատկապէս երբ խօսքը կը վերաբերի Արցախի, ցեղասպանութեան, Հայաստանի հողային ամբողջականութեան եւ ինքնութեան պահպանման հարցերուն:

Չօրաշարժ... Ծար. կարդալ էջ 3

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Սփիւռքի ինքնիշխան զօրաշարժի հրամայականը

Փարիզի մէջ գումարուած Սփիւռքի համազգային զօրաշարժի խորհրդածողովը պարզապէս հերթական հաւաք մը չէր, այլ կոչնակ՝ ուղղուած հայրենի հաւաքական գիտակցութեան: Մերօրեայ աշխարհաքաղաքական փոփոխներուն եւ հայրենի պետականութեան դիմագրաւած գոյութեան սպառնալիքներուն դիմաց, Սփիւռքը կը գտնուի պատմական շրջադարձի մը առջեւ: Այսօր հրամայական է վերատեսուցութեան ենթարկել Սփիւռքի գերակատարութիւնը՝ գոյն դուրս բերելով ոմանց ենթագրութեամբ անոր սոսկ օժանդակողի կամ նիւթական պաշարներ մատակարարողի նեղ ու սահմանափակ շրջանակէն: Սփիւռքը պէտք է ձեւակերպէ իր կամքը որպէս ինքնուրոյն ուղղափարական գործօն, որ ունակ է ոչ միայն սատարելու, այլեւ ուղղորդելու համազգային նպատակներու հետապնդումը՝ ըլլալով ազգու եւ անշրջանցելի ուժ միջազգային թատերաբեմին վրայ:

Փարիզի մէջ հնչած պատգամները, որոնք կը շեշտէին Սփիւռքի վերակազմակերպման հրատապութիւնը, յստակ ուղեւիշ կը հանդիսանան այս նոր տեսլականին համար: Սփիւռքը պարտաւոր է դառնալ վճռական գործօն՝ ինքնակամ եւ ինքնիշխան մարմին, որ ունի քաղաքական իր սեփական օրակարգը: Արցախի իրաւունքներու պաշտպանութիւնը, Յեղասպանութեան արգար հատուցումը եւ պահանջատիրութիւնը չեն կրնար կախալ ըլլալ Հայաստանի օրուան իշխանութիւններու դիւանագիտական տատանումներէն կամ մարտավարական ողորմելի նահանջներէն: Սփիւռքը պէտք է հանդիսանայ այն անդրդուելի պատնէշը, որ թոյլ չի տար ազգային գերագոյն շահերու սակարկումին, ստեղծելով ուժային այնպիսի կեդրոն, որ աւելի բարձր է ներհայաստանեան քաղաքական վերիվայրումներէն կամ պետական կառոյցներու կողմէ ներթափանցման ու պատակտման փորձերէն:

Այս պատասխանատու ինքնիշխանութեան գաղափարը կ'ենթադրէ նաեւ Սփիւռքի սեփական ներքին խնդիրներու առաջնահերթութիւնը: Հայապահպանումը, Արեւմտահայերէնի կենսունակութեան վերականգնումը եւ մշակութային ինքնատուութեան պահպանումը պէտք է զիտուին որպէս երկրորդական հարցեր: Ընդհակառակը, հզոր եւ կազմակերպուած Սփիւռք մը միայն փոխընթացի կրնայ ըլլալ հզոր ու զարգացող Հայաստանի մը կերտման: Սփիւռքը պէտք է ունենայ յստակ գիտակցութիւն, որ իր կառոյցներու ամրապնդումը եւ երիտասարդ սերունդներու հայեցի կերտումը առանձին ճակատներ են, որոնք կը պահանջեն առանձնաշարժ ծրագրաւորում եւ հետեւողականութիւն: Մեր համայնքները պէտք է վերածուին ինքնաբաւ միաւորներու, որոնք զօրակցելով հայրենիքին՝ չեն կորսնցներ իրենց ինքնակառավարման ղեկը եւ չեն դառնար պարզ գործիքներ իշխանական այս կամ այն օղակներու ձեռքին:

Փարիզեան այս խորհրդածողովը վերջնականապէս հաստատեց, որ Սփիւռքի զօրաշարժը այլեւս անհրաժեշտութիւն է եւ ոչ թէ ընտրութիւն: Մենք կոչուած ենք ստեղծելու այնպիսի մթնոլորտ մը, ուր ազգային արժէքներով օժտուած իշխանութիւններու առկայութեան պայմաններուն մէջ Հայրենիքն ու սփիւռքը պէտք է գործեն որպէս դաշնակիցներ, ուր Սփիւռքը միշտ կը պահէ իր բարոյական եւ քաղաքական անկախութիւնը: Առանց ներքին թափանցումներու եւ առանց ենթակայութեան կապանքներու, Սփիւռքը պիտի չարձանակէ իր զոհաբերութիւնը յանուն համազգային իտէլաններուն, սակայն այդ մէկը պիտի ընէ որպէս գիտակից եւ ինքնակամ ուժ: Միայն այսպիսի յարացոյցով է, որ կարելի պիտի ըլլայ դիմագրաւել պատմութեան մարտահրաւրէրները եւ ապահովել հայրենիքի մնայուն ներկայութիւնը համաշխարհային քարտէսին վրայ՝ որպէս ազգեցիկ ու յարգուած միաւոր:

Celebrating 20 Years of Helping You Hear Better

Special May Offer: Hearing Aid Rejuvenation
Appointments \$299 (Reg. \$499)

hearing aid source
hearing instrument specialists

Learn more at hearingaidsources.ca

Toronto, ON
Main Floor, 702 Coxwell Ave,
Toronto, ON M4C 3B9
Ph: (416) 463-4327

Scarborough, ON
Parkway Mall,
85 Ellesmere Rd., Unit 29,
Scarborough, ON M1R 4B9
Ph: (416) 754-4327



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղին աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Վեհափառ Հայրապետները կը շեշտեն միասնություն, ինքնություն պահպանման եւ Հայաստան-Սփիւոք յարաբերություններու վերաբերման հրամայականը

Փարիզի մէջ ապրիլ 11-12-ին տեղի ունեցած Սփիւոքի ազգային զօրաշարժի խորհրդատուներու առթիւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ երկու կաթողիկոսներու ուղեւորները կեդրոնացան համազգային միասնութեան ամրապնդման, ինքնութեան պահպանման եւ Հայաստան-Սփիւոք յարաբերութիւններու վերամաստատումն անհրաժեշտութեան վրայ: ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր պատգամին մէջ ընդգծեց, որ հայ ժողովուրդը այսօր կը դիմագրաւէ ներքին եւ արտաքին լուրջ մարտահրաւէրներ, որոնց շարքին առանձնապատուկ մտահոգութիւն կը յառաջացնեն ազգային կեանքին մէջ խորացող պառակտումները, ատելութեան մթնոլորտը եւ Հայաստան-Սփիւոք կապերու խաթարումը վիճակը:


Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ եկեղեցին եւ ազգային կառույցները պարտաւոր են համախմբել համազգային ներուժը, ապահովել հայրենիքի անվտանգութիւնը եւ ամրապնդել համագործակցութիւնը՝ միաժամանակ պահպանելով լեզուն, հաւատքը եւ ազգային ինքնութիւնը: Ան նաեւ վերահաստատեց, որ հզօր պետութեան եւ կազմակերպութեան Սփիւոքի փոխադարձ աջակցութեամբ միայն կարելի է ապահովել հայ ժողովուրդի կայուն ու բարօր ապագան:

ՆՍՕՏՏ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը իր հերթին աւելի ընդգծեց ինքնաքննութեան կոչ ուղղեց Սփիւոքին՝ հարց բարձրացնելով անոր ներկայ վիճակին եւ դերակատարութեան մասին: Ան նկատել տուաւ, որ Սփիւոքը կանգնած է նոր մարտահրաւէրներու դիմաց համաշխարհայնացած աշխարհի պայմաններուն մէջ, եւ անհ-

րաժեշտ է վերանայիլ գոյութիւն ունեցող կառույցները, մտածելակերպը եւ գործելանոցները՝ երիտասարդութիւնը ներգրաւելու եւ ազգային շունչը պահպանելու համար:

Արամ Ա. յատկապէս քննադատեց Հայաստան-Սփիւոք յարաբերութիւններու երկարամեայ անորոշութիւնն ու վերջին շրջանի անկումը՝ զայն կապելով Հայաստանի իշխանութիւններու ազգակործան քաղաքականութեան հետ, եւ շեշտեց, որ Սփիւոքը պէտք է ունենայ իր ինքնուրոյն մտածողութիւնը՝ միաժամանակ ծառայելով համազգային նպատակներուն: Ան նաեւ կարեւորեց համափիւռքեան օրակարգի ձեւաւորումը, ազգային պահանջատիրութեան վերամաստատումը եւ ուժեղ Հայաստանի կերտման անհրաժեշտութիւնը՝ որպէս համազգային առաջնահերթութիւն:

Երկու կաթողիկոսներու ուղեւորները, տարբեր շեշտադրումներով հանդերձ, ընդհանուր առմամբ միեւնոյն առանցքային պատգամ փոխանցեցին, թէ ներկայ բարդ պայմաններուն մէջ ազգային համախմբումը, արժէքներու պաշտպանութիւնը եւ Հայաստան-Սփիւոք կապերու առողջ վերակառուցումը այլընտրանք չունին:



Մեր օրակարգը պէտք է ըլլայ յստակ ու անդրդուելի՝ հիմնուած համազգային դիմադրութեան վրայ

ՀՅԴ Բիւրոյի անդամ Յովսէփ Տէր Գեորգեանի քննարկը Սփիւոքի զօրաշարժին նուիրուած խորհրդատուութիւնը:

Այսօր, այս դահլիճին մէջ համախմբուած են աշխարհի քսանհինգ երկիրներէ ժամանած աւելի քան հարիւր յիսուն մասնակիցներ:



Սակայն այս հաւաքը միայն թիւերու արձանագրութիւն մը չէ. ան կը մարմնաւորէ Սփիւոքի տասնամեակներու երկարաշունչ նուիրումին ու աշխատանքի կենդանի շարունակութիւնը՝ այն Սփիւոքին, որ սերունդ առ սերունդ եղած է հայ ինքնութեան կրող, ազգային պահանջատիրութեան առաջամարտիկ, մշակոյթի ու լեզուի շունչը պահպանող, եւ հայրենիքին ու Արցախին՝ նիւթական, բարոյական ու քաղաքական յենարան: Մեր համայնքները կառուցած են հաստատութիւններ, դպրոցներ, մամուլ ու կազմակերպութիւններ, պահած են ազգային յիշողութիւնը, բարձրացուցած են հայութեան ձայնը միջազգային բեմերուն վրայ, եւ հաւաքական կամքով վերածած են ցաւը՝ կազմակերպութեան ուժի: Այսօր մեզ կը համախմբէ մեր հայրենիքի եւ ազգի առջեւ ծառայած օրհասական տաղնապի գիտակցութիւնը: Մենք կը գտնուինք մեր պատմութեան ամենաճակատագրական հանգրուաններէն մէկուն առջեւ, ուր հայկական պետականութեան հիմքերը կը սասանին, իսկ ազգային ինքնութիւնը կ'ենթարկուի նպատակաւոր զրոյացումից ու հետեւողական յարձակումներու: Այս ապագային ընթացքին ամենացաւալի դրսեւորումներէն է Հայոց Յեղասպանութեան նսեմացման փորձը: Սփիւոքը երբեք չի՝ կրնար հանդուրժել թուրքիոյ եւ ատրպէյճանի կողմէ պարտադրուած Արցախի եւ մեր պատմական անժամանցեղի իրաւունքներու զիջումը՝ յանուն անորոշ ու ստորացուցիչ «խաղաղութեան»: Նոյնքան մտահոգիչ է իշխանութիւններու սանձազերծած պայքարը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ դէմ: Եւ երբ կը թիրախաւորուի Եկեղեցին, հետեւաբար նաեւ՝ հայ ինքնութեան ողնաշարը:

Այս ամբողջ տաղնապի կիզակէտին կը մնայ Արցախը՝ մեր չմարող վէրքը եւ պայքարի հիմնական առանցքը: Արցախի հայաթափումը եւ բռնադատումը մեր ժամանակներու մեծագոյն ողբերգութիւնն են, սակայն մենք չենք պատրաստուիլ ընդունել զայն որպէս վերջակէտ: Մինչ Հայաստանի իշխանութիւնները դաւադրական ընթացքով կը հրաժարին Արցախէն, Սփիւոքի զօրաշարժը իր բոլոր հոսանքներով պէտք է դառնայ այն հզօր ձայնը, որ միջազգային բեմերուն վրայ կը հետապնդէ Արցախի ժողովուրդի ամբողջական իրաւունքները:

Հայաստան-Սփիւոք յարաբերութիւններու դժուր, մենք ակնատեսն ենք մտահոգիչ իրողութեան մը, ուր Հայաստանի իշխանութիւնները կը փորձեն անտեսել, պառակտել եւ արհամարհել կազմակերպութեան Սփիւոքի տասնամեակներու վաստակը՝ վտանգելով մեր հաւաքական ուժակները: Մեր թշնամիներուն հաճոյանալու միտող այս քաղաքականութիւնը ոչ միայն չի նպաստեր Հայաստան-Սփիւոք համագործակցութեան, այլեւ համակարգուած կերպով կը քանդէ մինչեւ այսօր համատեղ ջանքերով կառուցուածը: Աւելին՝ այս ընդհանուր ընթացքը իր կործանարար ազդեցութիւնը ունի նաեւ Սփիւոքահայութեան վրայ՝ խորացնելով յուսալքութիւնը, խախտելով հայաստանի պետութեան հանդէպ վստահութիւնը, ստեղծելով ինքնութեան ճգնաժամ, թուլացնելով համայնքային կառույցներու համախմբումը եւ ստեղծելով սփիւոքահայութեան որոշ շերտերու մօտ ինքնամփոփումի վտանգաւոր մթնոլորտ:

Այս իրողութիւններուն լոյսին տակ, այս ճգնաժամային օրերուն հիմա ժամանակը չէ սփիւոքի ապագայի շուրջ տեսական քննարկումներու, կամ դէպի հայրենիք ուղղուող ներգրումներու եւ «բարեգործութեան» մասին խօսելու: Սփիւոքը պէտք է հանդէս գայ որպէս քաղաքական լիարժէք եւ աշխոյժ գործօն, որպէսզի միասնաբար կանխենք հայրենիքի եւ մեր ազգի ինքնութեան կորուստը:

Մեր օրակարգը պէտք է ըլլայ յստակ ու անդրդուելի՝ հիմնուած համազգային դիմադրութեան վրայ: Մենք պարտաւոր ենք հակազդել մեր հայրենիքին, պետութեան եւ ազգային ինքնութեան դէմ ուղղուած իւրաքանչիւր քայլի եւ ստեղծել ամուր պատնէշ մեր ազգի իրաւունքներուն, Եկեղեցւոյ ու արժէքներուն շուրջ: Սակայն մեր զօրաշարժը պէտք է սահմանափակուի միայն որպէս հակադարձութիւն: Ան պէտք է ունենայ ամուր ենթահող՝ դադարաւորական, բարոյական եւ կազմակերպական. պէտք է ըլլայ արժէք ստեղծող, ու ապագայակիրտ շարժում մը, որ կը միաւորէ մեր համայնքները ոչ միայն ընդդէմ վտանգներու, այլ՝ յանուն ծրագրուած վերելքի:

Յարգելի՛ ներկաներ, այս խորհրդատուութիւնի ընթացքին պարտաւոր ենք ըլլալ անկեղծ ու համարձակ մեր խիտորոշման ու առաջարկներուն մէջ: Այս խորհրդատուութիւնը պէտք է դառնայ այն հաստատուն մեկնակէտը, ուրիշ կը սկսի Սփիւոքի իրական զօրաշարժը՝ ամուր ծրագրով, պատասխանատու կազմակերպութեամբ, եւ համազգային հաւատքով: Յաւանքով դէպի կազմակերպութեան զօրաշարժ, յանուն հայութեան անվտանգ, ազգային եւ արժանապատիւ ապագային:

Զօրաշարժ... Սկիզբը կարող էլ է 1

Երկրորդ կտր սեղանը կեդրոնացաւ ազգային արժէքներուն, Հայ եկեղեցւոյ դերին եւ սփիւոքեան ինքնութեան պահպանման մարտահրաւէրներուն վրայ: ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ եւ ՀՀ ԱԺ պատգամաւոր Իշխան Սաղաթէլեան շեշտեց, որ հայ ժողովուրդը այսօր կը դիմագրաւէ դժուար պայմաններ, եւ այս համախմբումը անհրաժեշտ է Հայաստան-Սփիւոք միասնական մտածողութիւն ձեւաւորելու համար: Ան նաեւ մատնանշեց, որ ներկայ իշխանութիւններուն քաղաքականութիւնը կը հարուածէ հայկական ինքնութեան հիմնասիւնները, ներառեալ եկեղեցին եւ Արցախի հարցը: Յրանապի հայոց թեմի առաջնորդ Գրիգոր Եպիսկոպոս Խաչատրեան ներկայացուց եկեղեցւոյ պատմական դերակատարութիւնը ոչ միայն հոգեւոր, այլ նաեւ կրթական եւ ազգային կեանքին մէջ, անդրադառնալով նաեւ Ֆրանսահայ համայնքներու դպրոցաշինական ճիգերուն: Լիբանանահայոց թեմի առաջնորդ Շահէ Արք. Փանոսեան շեշտեց, թէ Սփիւոքի պահպանումը այսօր այլեւս պարզ կարգախօս չէ, այլ իրական մարտահրաւէր, մասնաւոր կերպով Սփիւոքը ինքզինք պաշտպանելու դժուար պայմաններուն մէջ կը գտնուի: Սարգիս Մեսրոպեան զգուշացուց ազգային յիշողութեան թուլացման, պատմական մոռացութեան եւ արմատներէն հեռանալու վտանգէն, իսկ Մոնթիթալի Սուրբ Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Գառնիկ Աւագ Քահանայ Գոյունեան վերահաստատեց, որ Հայ եկեղեցին կը մնայ հայ ինքնութեան հոգեւոր եւ մշակութային առանցքը:

Երրորդ կտր սեղանը քննարկեց Հայաստան-Սփիւոք յարաբերութիւններու հիմնահարցերն ու հեռանկարները: Հայաստանի նախկին վարչապետ Վազգէն Մանուկեան շեշտեց, որ Հայաստանի պետականութեան պահպանումը համազգային առաջնահերթութիւն է, եւ յառաջիկայ ընտրութիւնները կարեւոր հանգրուան կը կազմեն այս առումով: Հրապարակագիր Յարութ Սասունեան անդրադարձաւ անցեալի դրական փորձառութիւններուն եւ քննադատեց ներկայ ընթացքը, որ իր զնահատմամբ կը թուլացնէ Սփիւոքի հետ կապերը եւ կը նսեմացնէ ազգային արժէքները: Սարգիս Շահինեան կարեւոր համարեց Հայաստան-Սփիւոք կապերու վերակառուցումը համատեղ տեսլականով, իսկ քաղաքական վերլուծաբան Տիգրան Եկաւեան խօսեցաւ 2018-ին ետք արձանագրուած յետընթացին մասին, յատկապէս Սփիւոքի նախարարութեան վերացումէն ետք, ինչ որ իր կարծիքով թուլացուց համակարգումը եւ նուազեցուց վստահութիւնը: Լիբանանի Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ եւ ՀՅԴ Բիւրոյի անդամ Յակոբ Բագրատունին իր կարգին կոչ ուղղեց համախմբման եւ միասնական ներքին աշխատանքի՝ շեշտելով պետականութեան պահպանման եւ ազգային տեսլականի վերակենդանացման կարեւորութիւնը:

Ապրիլ 12-ին գումարուած չորրորդ կտր սեղանը նուիրուած էր Սփիւոքի զօրաշարժին եւ վերաշխուժացման գործնական ուղղութիւններուն: Իրաւաբան Ռաֆֆի Գալֆայեան ընդգծեց իրաւունքներու համընդհանրութիւնը, արդարադատութեան առանցքային տեղը եւ Սփիւոքի ներգրաւման կարեւորութիւնը՝ ազգային պետութեան կախուածութեան սահմանները յաղթահարելու համար: Իրաւաբան Գառնիկ Գէրբոնեան Արցախի հարցը ներկայացուց աւելի լայն պատմական եւ աշխարհաքաղաքական համաձիւր մէջ՝ շեշտելով վերադարձի իրաւունքի եւ միջազգային օրակարգին մէջ հարցի շարունակական ներկայութեան անհրաժեշտութիւնը: Եւրոպայի Հայ Դատի գրասենեակի պատասխանատու Գասպար Կարապետեան կարեւորեց կազմակերպութեան, արդիւնաւէտ եւ նպատակաւոր զօրաշարժը՝ հայրենիքի հետ երկկողմ կապերու զարգացման եւ պետական շահերուն ստատրեյլու համար: Իր կարգին, Փրոֆեսոր Յակոբ Կիւլլիւճեան խօսեցաւ Սփիւոքի ինքնութեան, ինքնաբաւ գոյատեւման եւ յատկապէս արեւմտահայերէնի պահպանման կենսական նշանակութեան մասին՝ նշելով, որ լեզուն միայն հաղորդակցութեան միջոց չէ, այլ ինքնութեան, մտածողութեան եւ արժեհամակարգի հիմնական տարածք:

Խորհրդատուութիւնը համադրող կազմին կողմէ փակման խօսքը արտասանեց ՀՅԴ Բիւրոյի անդամ Տարոն Տէր Խաչատրեան, որ նշեց, թէ հայութիւնը պատմական շրջադարձային պահի մը առջեւ կը գտնուի: Ան շեշտեց, որ Հայաստանը կը դիմադրուէ անվտանգային, քաղաքական եւ ազգային ծանր մարտահրաւէրներ, իսկ Արցախի հայաթափումը կը մնայ բաց վէրք ամբողջ ժողովուրդին համար: Իր խօսքին մէջ ան վերահաստատեց, որ Սփիւոքը միայն զգացական աջակցութիւն տուող կառույց չէ, այլ ազգային կամքի արտայայտութիւն, գոյատեւման երաշխիք եւ պետականութեան յենասիւն: Միեւնոյն ժամանակ ան շեշտեց, որ Արցախի հարցը փակուած չէ, եւ վերադարձի իրաւունքը, մշակութային ժառանգութեան պաշտպանութիւնն ու ազգային իրաւունքները կը շարունակեն մնալ համազգային առաջնահերթութիւններ: Անդրադառնալով Հայաստանի մէջ սպասուող ընտրութիւններուն՝ ան ընդգծեց, որ Սփիւոքը չի թելադրեր, այլ կը կիսէ իր մտահոգութիւնն ու յոյսը՝ ակնկալելով, որ որոշումները առաջնորդուին պետականութեան ամրապնդման, ազգային ինքնութեան պահպանման եւ համազգային միասնութեան գիտակցութեամբ:

Խորհրդատուութիւնը աւարտեցաւ միաձայնութեամբ ընդունուած կոչ-յայտարարութեամբ: Երկու օր շարունակուած խորքային քննարկումներէ ետք, հաւաքը փակուեցաւ «Մեր Հայրենիք» եւ Արցախի Հանրապետութեան քայլերգներով:

Կոչ-յայտարարութիւնը տեսնել առանձնաբար էջ 6:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ ԿԱՄ ՎԱՐԺԵՑՈՒՄ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ (Սփիւռքեացի մտածողություն մը)

ԻՆՔՆՈՒԹԻՒՆ...

2. գ.- Թ. Քիւրքճեանի «Երկրորդ Հաւասարում Բազմաթիւ Անյայտներով» գրափորձը ի՞նչ կ'ըսէ:

Կը մեկնի նշելով Վարդգէս Պետրոսեանի «Հաւասարում Բազմաթիւ Անյայտներով» խորհրդածութեան իր ընթացումը Փարիզի մէջ, Անն տը Պըրթեանէի արձանին տակ, եւ այն «բնանկարին գրկին», ուր անցեալի սերունդ մը փորձած էր իր կացութիւնը մտածել (Շահան Շահնուրի սերունդը), սակայն խեղդուած էր իր «աւանդութիւն» համարածին մեռնելուն համար ողբին եւ ընդհանրական նահանջի պաթոսին մէջ: Ապա յիշած է «ակադեմական ֆրանսերէն»-ով իր խօսակցութիւնը համալսարանական ընկերոջ մը՝ Շարլիի հետ: «Ակադեմական ֆրանսերէն»-ով՝ որովհետեւ ատոր «կազմակերպութիւն» մէջ ձեռք կ'առնէր ուսանողական իրենց մտքերը, եւ ատիկա «անհամեմատ աւելի հեշտ» կը թուէր թէ՛ «կիսով չափ ֆրանսախօս» Շարլիին, եւ թէ՛ իրեն: Խօսակցութեան հիմնատարը՝ «սփիւռքահայու կարեւորութեան հարցը» էր, «անոր կացութեան (condition) սահմանումը», անոր «եղբեր»-ուն (dimensions) ճանաչումը, եւ ստանձնումը: Ընկերոջ հետ մտքերու փոխանակումը կանխած էր իր «Հանդիպում»ը Պետրոսեանի խորհրդածութեան, որուն մէջ գտած էր երիտասարդ, պայծառատես ծաւալող բանականութիւն եւ ուժ:

Քիւրքճեանի ֆրանսահայ համալսարանական սերնդակիցներուն, եւ իրեն համար՝ Շահնուրեան սերունդին ողբն ու պաթոսը մերժելի էին: Ըստ 30-ականներու սերունդին, եւ անոր հետեւողներուն՝ կացութիւնը անել մըն էր, թէ հայօրէն ըլլալը կարելի էր միայն՝ «աւանդապաշտ»-ութեամբ, որ ձուլումին հակադրուելու էր: Մինչդեռ կացութիւնը «չատ աւելի բարդ» էր (ինչպէս է որեւէ կացութիւն) քան հակադրողական ըմբռնումը, խորհած էին ուսանող երիտասարդները: Քիւրքճեան գրած է. «Մեր թուականութեան 1968 տարին, Փարիզի մէջ կամ այլուր, հայութեան մասին մտածող հայածին երիտասարդը չի հասկնար — եւ դժուար է հասկնալ — որ ամբողջ սերունդ մը (եւ անոր յաջորդ աշակերտող սերունդը), քառասուն տարիէ ի վեր, Փարիզէն մինչեւ Պէյրութ, Պոսթընէն մինչեւ Թեհրան՝ ճօճուած ըլլալ այս երկու ճամբարներուն միջեւ — պահպանումի խուճապին եւ նահանջի խուճապին, ապրած ըլլալ պարզ տուեալով»: Իր եւ իր տեսակէն սերունդին կեցուածքն էր ո՛չ թէ ենթակուել խուճապներուն, այլ՝ ըլլալ ստեղծագործ: Որովհետեւ այն խուճապները՝ «գոյութեանական օտարում» կը յառաջացնէին:

Յետոյ Քիւրքճեան անցած է իր ծննդավայրին՝ լիբանանահայ գաղութին մէջ փնտռելու «ստորգոյութիւնները», որոնցմով գաղութը կը ճանչնայ ինքզինք, եւ իր հաւաքական կացութիւնը: Ենթադրած է, թէ այն ստորգոյութիւնները նոյնը ըլլալու էին կամ նոյնան-

ման՝ Պուրճ Համուտէն Թեհրան, կամ Գահիրէէն Պոլիս, անդին՝ տեղական բոլոր տարբերութիւններէն:

Պէյրութն ու Պուրճ Համուտէն էին իր եւ իր համաքաղաքացի հայ սերնդակիցներէ շատերուն մանկութեան եւ պատանութեան միջավայրը: Իրենց հետ էին 1915-ի սերունդը, Տէր Զօրը՝ որ արքայապետի տիրապետութեամբ ներկայ էր հաւաքական ենթագիտակցութեան վրայ, թիթեղաշէն տուներ, ցեխ, ջանք համայնքային կազմակերպումի, սրտաճմիրի ֆոլքլոր, ազգային վարժարաններ՝ «պաթեթիք» ուսուցիչներով, որոնք տեղական լեզուին անծանօթ էին (ինք «տգիտութիւն» ծանր բառը գործածած է), եւ աշակերտներուն կը յորդորէին արաբերէն չտարբերելու համար, զարմանազան հարցեր, առասպելական անտեղեկութիւն երկրին առօրեային, «աղաներ» եւ անոնց մանկալաւիկ «խոստմնալից երիտասարդ մտաւորական»ներ եւայլն:

Քիւրքճեան իր սերունդի դաստիարակութեան անդրադառնալով, գրած է, թէ իրենք կորսուած էին «ազգային» դաստիարակութեամբ դպրոցին եւ քաղաքի գրաւչութիւններուն մէջ: Զգացումը ունէին, թէ քաղաքին մէջ «ապօրինի բան մըն էր» իրենց հայութիւնը, «կէս բան մը», թէ եւ ըստ իրենց տրուած պատգամներուն՝ երբեմն կը յաջողէին «հապար ըլլալ» իրենց հայութեամբ: Դաստիարակութիւնը՝ իրենց առօրեան, տնտեսական պայմանները, «վայելած առաւելութիւնները», շրջապատի մշակութային-քաղաքակրթական տարրերը կը քարոզէր իբր հակադրական հայկականութեան: «Անհաւատալի այլուրութիւն» մըն էր հայ հաւաքական ծիրը: Այնուհանդերձ, իրենք տարտամօրէն կը զգային նաեւ կարիքը «օրինականացնելու» իրենց մէջ անցեալի մը եւ ներկայի մը համակցութիւնը: Բայց չէին գիտեր՝ ինչպէ՞ս «խրաւական հիմք» տալ իրենց փորձառութեան: Ուստի՝ կը մնային վարանոտ, կասկածով լեցուն՝ հանդէպ իրենց ուժերուն, կարելիութիւններուն: Հաշմուած էին «մշակութային-քաղաքակրթական հաշմումով»: Այսպէս՝ «մահուան եւ կենսապահպանումի մղումները» կը կրկնուէին Սուրբոյ անապատներէն մինչեւ ազգային վարժարաններուն դասարանները:

Պոսթկոմունիզմը մը Քիւրքճեան գրած է. «Օտարեալ կեանք մը կ'ապրիմ ես: Օտարեալ կեանք մը կ'ապրիս դուն: Օտարում՝ aliénation կ'ապրինք մենք. օտարումն ենք ամէն մէկս՝ իր անհատական գոյութեանէն, կարելիութիւններէն: Բոլորս հաւաքաբար օտարած ենք մեր հաւաքական կացութեանէն: Թակարդի մէջ բռնուածի պէս, բռնուած Ձուլումի եւ Պահպանումի միթոսներուն, երեւակայական ստորգոյութիւններուն միջեւ»: Ապա գրած հարցումը. ինչո՞վ չափել հայութիւնը: Եւ պատասխանած. հայութիւնը միայն կը չափուի իր անհատներուն պայծառ մտքով եւ հաւատքով: Հայ ըլլալու համար անհրաժեշտ է գիտակից ըլլալ իր գոյու-

թեան բարդ տուեալներուն, անձնական համադրութիւն մը իրագործել սեփական ժառանգութեան եւ այլոց ժառանգութեան միջեւ: Այն համադրութիւնն է, որ Ձուլումի եւ Պահպանումի գաղափարաբանութեան սնանկութենէն դուրս գալով՝ կը յաջողի ստեղծել «հայութեան նո՛ր, անտիպ որակ մը», այն՝ որ իր գոյութիւնը չի քաշքշեր, այն՝ որ չի նուաճուիր:

Փարիզեան իր փորձառութիւնը՝ զինք բարձրացուցած է սա գիտացութեան եւ համոզումին, թէ «հայութեան նո՛ր, անտիպ որակ»ը ստեղծելի է՝

— Հայ ինքնութիւնը հասկնալով՝ ո՛չ իբր միանգամընդմիջ սահմանուած էութիւն, կամ՝ վերացական, պիտի ըսէի՝ անդրանցական գաղափար, ինչպէս պղատնական յաւիտենական գաղափարները, այլ որպէս գոյութեանական կացութեան մէջ «ամէն վայրկեան» ճշդելի արժէք:

— Գիտակցելով՝ թէ ձուլումը հեւտանքն է նաեւ մանաւանդ «պահպանումի միթոսին, առասպելին, խուճապին»: Եւ ուստի՝ ստեղծել, եւ ո՛չ թէ պահպանել, քանի որ «ստեղծումը արդէն կը պահպանէ»:

— Ընդունելով՝ թէ հայօրէն ըլլալը՝ «մարդկայնօրէն ապրելու ձեւերէն մէկն է, կամ... կրնայ ըլլալ»:

— Ապրելով այժմեայութիւնը:

— Պատրաստուելով դիմագրաւել եւ նուաճել որեւէ նորութիւն, որեւէ արժէք, այլապէս՝ անոնց հետ օր մը անխուսափելի դէմադրութիւնը՝ կորուստ կը բերէ...:

— Բնակութեան երկրին «քաղաքացիական կեանքի կազմակերպութիւն»-ուն մէջ մտնելով, յանձնառութիւններուն միախառնուելով, փոխանակ ապրելու գաղթականի հոգեբանութեամբ, եւ այն հոգեբանութիւնը յաւերժացնելու:

— Ընդառաջելով մեծ մշակոյթներու նպաստին, զանոնք բերելով սեփական ժառանգութեան մէջ, ու զայն պատուաստելով:

2008-ին իր «Հանգրուանի Մը Նօթերէն» յոգնուածին մէջ, որ քառասուն տարիներ ետք՝ 1968-ի իր տեսլականին կ'անդրադառնար, Քիւրքճեան գրած է. «Ամէն ժամանակ եւ իրագործութիւն, ամէն սերունդ՝ պարտի վերսկսել ինքնասահմանումի, ինքնաճանաչումի՝ ճիշդ, հեռու՝ սոսկական «պահպանում»ի անկար, երկչոտ կեցուածքէն: Մեր հազարամեայ պատմութեան (հասկնալ՝ Սփիւռքը իբր հազարամեայ իրականութիւն, թէ եւ յիշել՝ որ իրեն համար 1915-ը բեկումնային թուականն է — ԳԲ) խորքային ընթացում մը՝ միայն այս դասը կու տայ մեզի. մնայուն ինքնավերասահմանումի, ինքնանորոգումի, ինքնահամադրումի դաս. ո՛չ ինքնակրկնումի, «հայապահպանում»ի...:

ԳԱՌՆԻԿ Ա. Ք. Գ. (Ծարուակելի 6)

Ի ՅՈՒԾ Յիշատակը՝ անթառամ



Անահիտ (Անայիս Սեւակեան) եւ Յակոբ Տիմիթեաններ, Լուսակարը՝ Արագի

Ամեն անգամ, որ մեր սիրելիներէն մէկը առյաւէտ կը հեռանայ այս մոլորակէն, առաջին տպաւորութիւններէն մէկը, որ կ'ունենանք այս երկրաւոր կեանքի ունայնութիւնն է: Կու գանք ու կ'երթանք, ոչ մեր ուզելով, եւ ունայն կը նկատենք մեր այդ անցքը:

Սակայն իրականութիւնը այդ չէ: Կեանքը հրաշք մըն է, հրաշալի շնորհ մըն է, որ մեզի կը մատուցուի, — մէ՛կ անգամուան համար միայն, — ու մեզի կը մնայ ըլլալ այդ շնորհին արժանի ու մեր կեանքը ապրել լիովին, ո՛չ ունայնաբար:

Երկրորդ իրողութիւնը, որուն կ'անդրադառնանք, այն ծիրն է, որ մեր կեանքը կը հանդիսանայ, այն ուստայնը կամ այն ցանցը, որ մեր ծնունդէն սկսեալ ձեւ կ'առնէ ու հետզհետէ կը տարածուի, կ'ընդլայնի՝ ամեն մէկ նոր ծանօթութեան հետ: Իւրաքանչիւր հարազատ, ընկեր թէ բարեկամ, դրացի թէ գործակից բան մը կ'աւելցնէ մեր կեանքին վրայ, կ'երկարէ այդ ուստայնին թելերը, կը բազմացնէ ցանցին օղակները, կը հարստացնէ մեզ՝ թէկուզ «բարեւ»-ով մը, «բարի լոյս»-ով մը կամ «ինչպէ՞ս ես»-ով մը: Այս ընդլայնումը սահման չունի, կրնայ սկսիլ տունէն ու հասնիլ աշխարհի չորս ծագերը:

Միւս կողմէ, երբ այս ծանօթներէն, երկրագնդակիցներէն մէկն ու մէկը կը մեկնի այս երկրագոյնէն վրայ այլուր կամ անկէ ալ դուրս՝ առանց հասցնէ ձգելու, բան մը կը պակսի մեզմէ: Ուստայ-

րօրէն գովեցին զիրենք՝ հաստատելով անոնց լաւ մարդիկ, լաւ հայեր, լաւ ծնողներ ու մեծծնողներ եղած ըլլալը:

Ինչ որ կ'ուզէի աւելցնել, այն է, թէ դիւրաւ չեն մոռցուիր նման պարզ անձեր, չեն մոռցուիր յատկապէս այն ժպիտը, այն սէրը, որ անոնք իրենց շուրջիներուն կը պարգեւէին անսակարկ, մանաւանդ այն ուրախութիւնները, որ միասին կ'ապրէին նոր ծնունդներու, տարեդարձներու, յաջողութիւններու առթիւ, կամ տխրութիւնները՝ կորուստներու առթիւ:

Անոնց կեանքը ունայն չէր անցած երբեք: Այդ իսկ պատճառաւ ալ ի սրտէ ու անսթեքելի պիտի ըսեմ.

- Յիշատակն անթառամ մնայ:

ՎԻԵՏ-ԱՐՄԷՆ

CAMAM logo and address information: 3401, Olivar Asselin, Montréal, Qc H4J 1L5; 397, boul. des Prairies, Laval, Qc H7N 2W6; 45 Hallcrown Place, Willowdale, On M2J 4Y4; To donate online www.camam.org



ԼՈՒՍԱՄԻՈՐԻԶ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Թ. ՏԱՐԻ ԹԻՎ 5, Ապրիլ 2026



ՅՈՒՍԱԴՐԻԶ ՍԿԻԶԲԸ ՆՈՐ ԿԵԱՆՔԻ

Ծաղկազարդին Քրիստոս յաղթական մուտք գործած էր Երուսաղէմ:

Աագ Ուրբաթ օր ամէն ինչ ւաւրտած էր: Քրիստոս Խաչին վրայ իր մահկանացուն կնքած էր: Աշակերտները՝ յուսահատ: Գերեզմանը՝ վերջակէտ:

Այս նոյն պատկերը կը տիրէ մեր կեանքի մրրկալից փոթորիկներուն դիմաց: Յաճախ կը կանգնինք մեր «գերեզմաններուն» առջեւ, ինչպէս ցափ, կորուստի, հիւանդութեան եւ կամ այլ տեսակի դժուարութեան ու նեղութեան մէջ եւ յուսահատ կը կարծենք ամէն ինչ ւաւրտած է:

Մարդկային կեանքի ընթացքին կան պահեր, երբ ամէն ինչ գերեզմանի մը նման կը փակուի մեր դիմաց: Երբ խաւարը աւելի տիրական կը դառնայ քան լոյսը: Երբ աղօթքը կարծես կը լռէ եւ պատասխան չի տար: Երբ մահը վերջնական իրականութիւն կը դառնայ:

Սակայն, այս օրերուն երկինքն ու երկիրը իրարու կը հանդիպին եւ զիրար կը գրկեն:

Մարդկային տագնապն ու տխրութիւնը աստուածային մխիթարութեամբ կը սփոփի:

Այս օրերուն եկեղեցին աշխարհին դիմաց ուրախութեամբ ու ցնծութեամբ կը յայտարարէ յափտենական ճշմարտութիւնը, որ գերեզմանի քարը վերջնականապէս գլորուած է: Գերեզմանը թափուր է: Քրիստոս յարութիւն առած է: Այս ճշմարտութիւնը կը փոխէ ամէն ինչ:

Հետեւաբար ամբողջ սրտով սրտագինս գոչենք. Մահը պարտուած է: Սէրը յաղթած է: Յոյսը յաղթած է: Պօղոս Առաքեալին բառերով քաջաբար ու յաղթական ձայնով բոլորս աղաղակենք՝ «Ո՛ր է, ո՛վ մահ, յաղթանակը»:

Քրիստոս յարութիւն առաւ: Մահուան վրայ յաղթանակ տարաւ եւ իր յարութեամբ մեզի նոր կեանք պարգեւեց: Քրիստոսի թափուր գերեզմանը վախճանը չէր այլեւս, այլ սկիզբն էր նոր կեանքի: Այլեւս ողորմութեան դուռը փակ չէր մեղաւոր մարդուն առջեւ, ընդհակառակը բացուած էր հոգեւոր վերածնունդի նոր ճանապարհը:

Թող Յարուցեալ Տէրը մխիթարէ, զօրացնէ եւ առաջնորդէ մեզ դէպի ՅՈՒՍԱԴՐԻԶ ՍԿԻԶԲԸ ՆՈՐ ԿԵԱՆՔԻ:

**Քրիստոս յարեաւ ի մեռելոց:
Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի: Ամէն:**

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ

ԽՄԱՐԱԳՐԱԿԱՆ

Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնը պատմական անժխտելի եղելութիւն մըն է: Յիսուս՝ Աստուծոյ Միածին Որդին աշխարհ եկաւ, մեզի պէս մարդ եղաւ, քարոզեց, դաստիարակեց, ուղղորդեց ժողովուրդը եւ իր կեանքը զոհելով Խաչին վրայ, իր արեամբ քաւեց մարդոց մեղքերը եւ իր Յարութեամբ կեանք պարգեւեց համայն մարդկութեան:

Երբ կը տօնենք Սուրբ Յարութեան տօնը, մենք չենք յիշեր միայն դատարկ գերեզմանը, այլ կը վերապրինք այն մեծ յաղթանակը, զոր Քրիստոս Ինք մեզի՝ մեղաւորներուս համար տարաւ՝ մահը խորտակեց եւ մարդս մեղքի տիղմէն դուրս հանեց: Յաղթանակի այս օրը մեզմէ իւրաքանչիւրը կը հրաւիրէ՝ մեր կեանքին մէջ եւս յաղթահարելու ամէն դժուարութիւն եւ Քրիստոսով մենք զմեզ նորոգելու նոր յոյսով ու հաւատքով:

Յարութեան լոյսը կը փայլի, ուր որ հաւատք կայ: Ան կը լուսատրէ մեր ճամբաները, կը ջերմացնէ մեր սրտերը եւ կը զօրացնէ մեր կամքը՝ ապրելու Աստուծոյ կամքին համաձայն: Այս լոյսին տակ մարդ կը վերագտնէ իր իսկական կոչումը՝ սիրել իր նմանը, ներել իր դէմ հակառակութիւն ունեցողը եւ նորոգուիլ մտապէս, հոգեպէս ու ֆիզիքապէս:

Այսօր, աւելի քան երբեք, աշխարհը կարօտ է Յարութեան լոյսին: Պատերազմներու, տագնապներու եւ անորոշութեան մէջ, Քրիստոսի Յարութիւնը կը մնայ անսասան յոյսի աղբիւր մը եւ մարդուս կը յիշեցնէ, որ մահը վերջը չէ, դժուարութիւնները վերջակէտ չեն դներ մեր կեանքին մէջ, ամէն բան Տիրոջմով կը նորոգուի: Քրիստոսի Յարութեամբ կեանքը կը յաղթէ մահուան, եւ լոյսը՝ խաւարին:

Թող Քրիստոսի Հրաշափառ Յարութեան տօնը ըլլայ առիթ՝ վերանորոգելու մեր հաւատքը եւ նորոգելու մեր հոգեւոր կեանքը:

**ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՎ Ի ՄԵՌԵԼՈՑ
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ**

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Քրիստոս արդարեւ մեռելներէն յարութիւն առած է, որպէս առաջին օրինակը մեռելներու յարութեան: Ինչպէս մարդով մը սկիզբ առաւ մահը, նոյնպէս մարդով մը սկիզբ կ'առնէ մեռելներու յարութիւնը: Ինչպէս Ադամէ ծնածները բոլորն ալ կը մեռնին, այնպէս ալ Քրիստոսէ ծնածները բոլորն ալ պիտի կենդանան» (Ա. Կորնթացիներուն 15.20-22):

“The truth is that Christ has been raised from death, as the guarantee that those who sleep in death will also be raised. For just as death came by means of a man, in the same way the rising from death comes by means of a man. For just as all people die because of their union with Adam, in the same way all will be raised to life because of their union with Christ.” (1 Corinthians 15.20-22)





ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԸ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ՄԱՍԻՆ

Ինչպես հողը կ'աճեցնէ այն ինչ որ կը սերմանուի իր մէջ, այնպէս ալ, հողեղէն մարդու բնութիւնը կը պտղաբերէ այն ինչ որ մարդու բնութիւնը կը պտղաբերէ այն ինչ որ կը սերմանուի իր մէջ՝ ատիկա ըլլայ մեղքի փուշ թէ առաքինութեան ծաղիկ: Հետեաբար, եկէք Աստուծոյ պատուիրաններուն սերմնահատիկներուն լոյսը ցանենք մեր հոգիներուն մէջ, որպէսզի ամէն տեսակի բարի ծաղիկներ աճին հոն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՅԻ

Ինչպէս մշակը շտեմարաններէն սերմ կ'առնէ եւ զայն արտին մէջ կը ցանէ, նոյնպէս ալ, մեր միտքը Սուրբ Գիրքի շտեմարանէն Աստուծոյ խօսքին սերմը կ'առնէ եւ զայն կ'ոռոզէ հաւատքի իմաստութեան ջուրով, միշտ ինքն իրեն յիշեցնելով մահուամբ այս աշխարհէն դուրս գալու մասին:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ

Սիրելիներ, Աստուածաշունչ Մատեանի ընթերցանութիւնը մեծ շնորհ է: Անիկա իմաստուն կը դարձնէ հոգին, մարդս կը դարձնէ երախտագէտ Աստուծոյ հանդէպ, թոյլ չի տար մեզի հակիլ չար բարքերու, մեր միտքը կը յափշտակէ եւ կը կեդրոնացնէ երկինքի վրայ, մեզ կը մղէ գործելու՝ Տիրոջմէ հատուցում ստանալու ակնկալութեամբ, եւ մեծ նախանձախնդրութեամբ ձգտելու առաքինութեանց սխրանքներու:

ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆ

ՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ ԶԱՍՏՈՒԱԾ ԿԱՆՉԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Ո՛վ Հայր եւ Աստուած, որ գթառատ ես, եւ ամէն տեսակ մխիթարութիւն պարգեւելով մեզ կը մխիթարես մեր բոլոր նեղութիւններուն ժամանակ: Այս պահուն լա՛ք քու ծառաներուդ պաղատալից խնդրանքը, եւ ընդունէ մեր աղաչանքը: Դո՛ւն որ բարերար ես, ջնջէ մեր յանցանքներուն արժանի ահաւոր պատիժը: Ներողամի՛տ եղի՛ր եւ լա՛ք մեզ, քաւէ եւ ներէ մեր մեղքերը: Արժանի՛ ըրէ՛ գոհութեամբ փառաւորելու քեզ՝ Հօր եւ Միածին Որդիին հետ միասին. այժմ եւ յաւիտեան:

ԱՄԷՆ:

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ ԲԱՆ ԶԳ. (Ա.)

Անքնին բարձրեալ, ահեղ զօրութիւն, արարածներու Տէր, երկինքի արքայ, հրեշտակներու ստեղծող, միտքի գոյարան, հրեղէններու հաստիչ, հոգիներու բարի պետ, ապահովութեան աջ, հանգստաւէտ անդորրութիւն, լոյսի աչք, բերկրալից պայծառութիւն, երանութեան ճամբայ, կեանքի պատճառ, բանականութեան շարժառիթ, անվտանգ փրկութիւն, խաղաղութեան առաջնորդ, ամրութեան պարիսպ, պահպանութեան պատուար, օրհնութեան հրեղէն ցանկ, անոխակալութեան սահման, իմ այս խոստովանական աղօթքներու շնորհիւ ի բարին յիշէ մեր մարդկային թշնամիները եւ ողորմութիւն եւ քաւութիւն պարգեւէ՛ անոնց. իմ պատճառովս մի՛ բարկանար անոնց, Տէր, իբրեւ սուրբեր բամբասողներու իմ մասին ունեցած մեծ սիրոյդ համար. այլ զանոնք նկատելով չարեր կշտամբողներ, եւ իրաւամբ նախատողներ, ներէ՛ իրենց յանցանքներուն: Եթէ՛ անոնք ու ես Քու առջեդ ներկայանանք, ո՛վ արդարադատ, անոնց մէջ պիտի գտնես այնպիսիներ, որոնք քիչ մը միայն յանցաւոր են հանդէպ մեզի, ու թերեւ իրաւունքով ալ բամբասած են զմեզ: Իսկ ես, ո՛վ ամենապարգեւ, ինչ անհամար ու անկշռելի եւ բազմապիսի ուխտազանցութիւններ ունեցած եմ հանդէպ Քեզի:

ԱՄԷՆ:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՒ ԅԱՐՈՒԹԻՒՆԸ

ՔՐԻՍՏՈՍ ԵՐԲ ԅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՒ:

Քրիստոս իր թաղումէն երեք օր ետք, Կիրակի առտու յարութիւն առաւ:

ԻՆՉ ԵՂԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՊԱՀԱԿՆԵՐԸ:

Գերեզմանին պահակները վախցան, սարսափեցան ու մտելի պէս գետին ինկան:

ԻՆՉՈ՞Ւ ԱՅՊՊԷՍ ԵՂԱՆ:

Որովհետեւ վախցան երբ տեսան՝ հրեշտակը, որ յանկարծ փայլակի պէս իջնելով՝ գերեզմանին դրան քարը գլորեց:

ՔՐԻՍՏՈՍԻ ԅԱՐՈՒԹԵԱՆ ԼՈՒՐԸ ԻՆՉՊԷՍ ՏԱՐԱԾՈՒԵՑԱՒ:

Կիրակի առտու կանուխ, երբ իւղաբեր կիները Յիսուսի մարմինը օծելու եկան, գերեզմանը բացուած տեսան եւ մարմինն ալ հոն չգտան:

ԻՆՉՊԷՍ ԳԻՏՅԱՆ, ՈՐ ՅԻՍՈՒՍ ԅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԵՐ Է:

Յանկարծ՝ երկու լուսափայլ հրեշտակներ անոնց երեցան եւ ըսին. «Ինչո՞ւ ողջը մտելներու մէջ կը փնտռէք: Հոս չէ՛ ան. Յարութիւն առաւ» (Դկ 24.5):

ՈՒՐԻՇ ԻՆՉ ԵՂԱՒ:

Երբ Մարիամ Մագթաղենացի կու լար, Յիսուս պարտիզպանի կերպարանքով անոր երեցաւ եւ պատուիրեց, որ երթայ եւ Իր յարութիւնը աշակերտներուն աւետէ:

ՊԱՀԱԿ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԱՅՍ ԴԷՊԸ ԻՐԵՆՑ ՄԵԾԵՐՈՒՆ ՊԱՍՏԵԼՈՒ ԶԳԱՏԻՆ:

Այո, պահակները անմիջապէս գացին քահանայապետներուն եւ հրեայ երեւելիներուն եւ եղածը պատմեցին:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ ԳԻՏՅԱՆ ՈՐ ՔՐԻՍՏՈՍ ԅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱԾ Է:

Այո, իւղաբեր կիները Յիսուսի յարութիւնը առաքեալներուն աւետեցին եւ անոնց ըսին, ինչ որ Յիսուս պատուիրեց:

ՅԻՍՈՒՍ ԻՆՉ ՊԱՏՈՒԻՐԵՑ:

Յիսուս պատուիրած էր, որ առաքեալները շուտով Գալիլիա երթան զԻնք տեսնելու, անոնք ալ գացին եւ հոն Յիսուսը տեսնելով՝ ուրախացան ու երկրպագեցին անոր:

ՈՒՐԻՇ ԱՆԳԱՄ ՅԻՍՈՒՍ ԵՐԵԻՑԱՒ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ:

Մինչեւ քառասուն օր Յիսուս տասնըմէկ անգամ երեցաւ իր աշակերտներուն, եւ իր ձեռքերուն եւ ոտքերուն վերքերը անոնց ցոյց տուաւ որ հաւատան:

ԻՆՉՈՒ ԱՆՈՆՑ ՄԷՋ ԶՀԱՒԱՏԱՅՈՂ ԿԱՐ:

Առաքեալներէն մէկը՝ Թովմաս, որ առաջին անգամ իր ընկերներուն հետ չէր, կասկած յայտնած էր:

ԹՈՎԱՄԱ ՅԵՏՈՅ ՀԱՒԱՏԱՅ:

Թովմաս երբ շօշափեց Յիսուսի վերքերը, հաւատաց. բայց Յիսուս ըսաւ. «Երանի անոնց՝ որոնք առանց զիս տեսնելու կը հաւատան» (Յի 20.29):

ՄԻՐԵԼ

Յաճախ սիրոյ շուրջ կը խօսինք այնպէս, ինչպէս զգացումի մը մասին: Բայց եթէ սպասենք սիրոյ զգացումի մը, նախքան մեր սիրելը, հաւանաբար երբեք չյաջողինք լաւապէս սիրել: Սիրոյ զգացումը գեղեցիկ է եւ կենսատու, բայց մեր սիրելը չի կրնար այդ զգացումին մէջ կեդրոնացած ըլլալ:

Սիրել կը նշանակէ մտածել, խօսիլ ու գործել ըստ այնմ հոգեւոր գիտակցութեան, թէ մենք մեծապէս սիրուած ենք Աստուծմէ եւ կոչուած ենք այդ սէրը տեսանելի դարձնել աշխարհիս մէջ:

Ընդհանրապէս գիտենք, թէ սիրով գործել ինչ կը նշանակէ: Եւ երբ սիրով «գործենք», նոյնիսկ այն ատեն, երբ ուրիշներ չկարենան փոխադարձել այդ սէրը, պիտի տեսնենք, որ մեր զգացումները համապատասխան են մեր գործերուն:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԸ
Հենրի Ծ. Մ. Նուրն





ՀԱՍՎԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ ԲՈՒՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԿԱՄ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ

ՈՂՋՈՑԻ

Այնուհետև, պատարագիչը կէս մը կը բանայ Սկիհին ծածկոցը, որպէսզի սուրբ Հացը երեւի մաղձմային եզերքէն, եւ թեթեւ մը դէպի ծախ կ'երթայ, որպէսզի Ընծան ժողովուրդին կողմէ տեսնուի, եւ ձեռնամած կը կանգնի: Իսկ բուրվառակիր Սարկաազը խնկարկելէ ետք, կու գայ կը համբուրէ Սեղանը եւ ապա պատարագիչին աջը, այդ ձեռով խաղաղութեան ողջոյնը անելով անկէ, եւ բեմին աջ աստիճաններէն վար իջնելով՝ ողջոյնը կը փոխանցէ դասին կեդրոնը կանգնած աագերէցին, կամ ժողովուրդի մէկ ներկայացուցիչին:

Մինչ այդ, սպասարկող Սարկաազը բեմէն կը հրահանգէ՝ «Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան...» (=Սուրբ համբոյրով ողջունեցէք իրար): Եւ դպիրները ժողովուրդին հետ միասին կ'երգեն ծանօթ գեղեցիկ երգը՝ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»:

Ողջոյնը տուող իւրաքանչիւր անձ կ'ըսէ՝ «Քրիստոս է ի միջի մերում» (=Քրիստոս մեր մէջն է), իսկ ողջոյնը ստացողը կը պատասխանէ «է եւ եղիցի» (=Մեր մէջն է եւ միշտ) պիտի ըլլայ):

Ողջոյնի այս խօսքը արտայայտութիւնն է այն համոզումին, թէ Քրիստոս իր յաւերժական ներկայութեամբ եւ հիմա այստեղ՝ եկեղեցիին մէջ՝ իր մարմնաւոր ներկայութեամբ «մեր մէջն է», ներկայ է:

Ողջոյնի բանաձեւին կ'ընկերանայ ողջագուրումը: Անցեալին այս ողջագուրումը ձեական չէր, այլ՝ իրական, եւ իրական համբոյրով, ինչպէս Սարկաազին հրահանգը կ'ըսէր: Սկզբնական քրիստոնէական փոքր համայնքները հաւատքի շատ սերտ ընտանիք մը կը կազմէին, եւ ոչ ոք անպարկեշտ բան կը տեսնէր ընտանիքի մը անդամներուն միջեւ փոխանակուած համբոյրին մէջ:

Որքան եկեղեցիները մեծցան, այնքան ողջոյնը ձեւափոխուեցաւ: Սկզբնական համբոյրը փոխանակուեցաւ ողջագուրումով, երբ իւրաքանչիւրը միասին ուր կը համբուրէր: Յետոյ, այս ալ փոխուեցաւ, եւ իրարու թեթեւ խոնարհումի մը ձեւը ստացաւ՝ աջ ձեռքը կրծքին դրուած: Իսկ կարգ մը ուրիշ եկեղեցիներու մէջ, անկախ վերածուեցաւ պարզ ձեռք թօթուելու արարողութեան մը, որ իր կարգին նահանջի մէջ է ներկայ ժամանակներուն...:

Պահ մը երեակայեցէք, որ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» երգը գոյութիւն չունի, եւ կատարեալ լռութեան մէջ հաւատացեալները իրարու կը փոխանցեն ողջոյնը: Այդպէս էր Պատարագը Ս. Ներսէս Շնորհալիին առաջ: Շնորհալի հայրապետը ինքն էր, որ այս սքանչելի երգը յօրինեց, տուեալ խորհրդալից պահը դարձնելով անելի պայծառ, եւ ողջոյնը՝ անելի գուարթ ու յաղթական: Եւ իր աշակերտը՝ Ս. Ներսէս Լամբրոնացի, արդէն այս երգը առած է իր Պատարագամատոյցին մէջ:

ՈՐՔ ՀԱՒԱՏՈՎ ԿԱՑՔ

Տօնական օրերուն, «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»էն անմիջապէս ետք, սուրբ Սեղանին սպասարկող Սարկաազները կ'երգեն. «Որք հաւատով կայք յանդիման սուրբ Սեղանոյս արքայական, տեսէք բազմեալ Քրիստոս արքայն եւ շուրջ պատեալ զօրք վերնականք» (=Դուք՝ որ հաւատքով կանգնած էք արքայական այս սուրբ Սեղանին դիմաց, տեսէք [հոն] բազմած Քրիստոս արքան եւ զինք շրջապատող վերնական [=երկնային] զօրքերը):

Այս երգին դպիրները եւ ժողովուրդը կը պատասխանեն. «Վերհամբառնամք զաչս ունելով եւ պաղատիմք զայս ասելով, ըզմեղա մեր մի՛ յիշեցես, այլ գթութեամբ քո քաւեցես: Ընդ հրեշտակացն օրինեմք զքեզ, եւ ընդ սրբոց [քոց], Տէր, փառք քեզ» (=Մեր աչքերը բարձրացնենք եւ պաղատիմք՝ այսպէս ըսելով.- Մեր մեղքերը մի՛ յիշեր, այլ գթութեամբ քաւէ: Հրեշտակներուն հետ կ'օրհնեցանք քեզ, եւ սուրբերուն հետ [կ'ըսենք]՝ «Փառք քեզի»):

Ժողովուրդը կը պատասխանէ՝ «Առ քեզ, Աստուած», այսինքն՝ ուշադրութեամբ կը նայինք քեզի, ի՞նչ Աստուած:

Սարկաազը կը շարունակէ՝ «Պատարագուողը Քրիստոս է, Աստուծոյ անարատ Գառնուկը» («Պատարագ Քրիստոս մատչի, անարատ Գառն Աստուծոյ»), որ Տէրը եւ Աստուածն է, եւ մենք իրեն է որ կը նայինք՝ մեր ուշադրութիւնը կեդրոնացուցած:

Եւ ժողովուրդը կը լրացնէ մտածումը. «Ողորմութիւնն է խաղաղութիւնն եւ պատարագ օրհնութեան», այսինքն՝ պատարագուող Աստուծոյ Գառնուկը մեզի համար աղբիւր է ողորմութեան եւ խաղաղութեան, եւ մեր գոհութեան կամ երախտագիտութեան ընծան է՝ Աստուծոյ:

Այստեղ միջանկեալ երկու նկատողութիւն ունինք.-

1. Թէպէտ մինչեւ այս հանգրուանը առիթ չէրու ըսելու, բայց այստեղ անելի յստակ կը դիտենք, որ Պատարագը կը զարգանայ Քահանայ եւ ժողովուրդ երկախօսութեամբ, կամ Քահանայ-Սարկաազ-ժողովուրդ եռախօսութեամբ: Յաճախ մէկուն կամ միւսին բաժինը ինքն իր մէջ լման չէ, եւ իր ամբողջական իմաստը կը ստանայ միայն դիտելով ամբողջ փոխասացութիւնը, ուր մէկ միտքը կը շղթայուի միւսին եւ կ'ամբողջացնէ զայն: Ասիկա՝ Պատարագի խօսքերը հասկնալու գաղտնիքներէն մէկն է:

2. Վերջին ժամանակներուն, շատեր սովորութիւն դարձուցեր են Ողջոյնէն անմիջապէս ետք նստիլ: Ասիկա հաշտ չէ տուեալ պահու մեծ խորհուրդին հետ: Սարկաազին հրահանգը (Գրաբարին մէջ) երեք անգամ կը կրկնէ՝ «կացցուք», որ կը նշանակէ «կանգնիք», «ոտքի կենանք [կամ մնանք]», կանգուն մնանք»: Ինչպէս մենք հետեւաբար կրնանք նստիլ: Նոյնը, ինչպէս տեսանք, այլ ձեռով կ'արտայայտուի՝ երբ խորանէն կ'երգուի. «Որք հաւատով կայք յանդիման սուրբ Սեղանոյս արքայական, տեսէք բազմեալ Քրիստոս արքայն եւ շուրջ պատեալ զօրք վերնականք» (=Դուք՝ որ հաւատքով կանգնած էք արքայական այս սուրբ Սեղանին դիմաց, տեսէք [հոն] բազմած Քրիստոս արքան եւ ինք շրջապատող վերնական [=երկնային] զօրքերը): Ո՛չ մէկ տրամաբանութիւն կը տեսնուի, որ մենք այս պահուն նստինք, եթէ անշուշտ հիւանդ չենք կամ հարկեցուցիչ ուրիշ պարագայ մը չունինք:

Ողջոյնի բաժինը կը փակուի օրհնութեամբ: Երբ բոլոր հաւատացեալները միասնաբար Աստուծոյ հետ իրենց հաշտութիւնը կը յայտարարեն հրճուանքով, եւ իրենց միտքները կը հոշակեն Քրիստոսով, պատարագիչը կը դառնայ եւ խաչակնքելով կ'օրհնէ բոլորը՝ Պօղոս Առաքեալի գործածած օրհնութեան բանաձեւով (հմմտ Բ. Կր 13.13). «Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւնն Հօր եւ Որդոյ եւ Հօգային Սրբոյ՝ եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանս» (=Հօրը, Որդիին եւ Սուրբ Հօգիին շնորհքը, սէր եւ աստուածային սրբացուցիչ զօրութիւնը ձեզի՝ բոլորիդ հետ ըլլայ):

Յետոյ, դարձեալ Սարկաազին ու ժողովուրդին միջեւ փոխասացութիւն մըն է որ կը հնչէ.

- Սարկաազը կը հրահանգէ. «ըզդրունս, զդրունս...», այսինքն՝ «Դունները, դոնները [փակեցէք], եւ իմաստուն զգուշատրութեամբ՝ ձեր միտքերը վեր բարձրացուցէք՝ աստուածային այս խորհուրդին»:

- Որպէս արձագանգ՝ ժողովուրդը կ'ըսէ. «Մեր միտքերը քեզի բարձրացուցած ենք, Ամենակալ Տէր» («Ունիմք առ քեզ, Տէր Ամենակալ»):

- Սարկաազը, իր կէս մնացած հրահանգը կը շարունակէ. «Եւ գոհացարուք զՏեառնէ՛ բոլորով սրտիս» (= Եւ ամբողջ սրտով գոհութիւն յայտնեցէք Տիրոջ):

- Ժողովուրդը կը պատասխանէ. «Արժան եւ իրաւ», այսինքն՝ «Իրաւացի է եւ արդար»:

- Իսկ, այս խօսքին ալ իմաստը պատարագիչին ծածուկ աղօթքն է, որ կ'ամբողջացնէ կամ կը բացայայտէ. «Իրապէս իրաւացի է եւ արդար՝ սրտանց եւ եռանդագին երկրպագելով փառաւորելով քեզ Ամենակալ Հայր...»:

Ապա, աղօթքը կը յիշէ Քրիստոսի մարդեղութիւնը եւ մեր մէջ բնակութիւնը, ատով իսկ երկիրը երկինքի վերածելը, որովհետեւ «մեր փրկութեան համար մարդանալով՝ երկնայիններու հոգեղէն խումբերուն միախառնուելու շնորհքը տուաւ մեզի»: Ապա, մինչ այդ ծածուկ ըստածները պատարագիչը կը լրացնէ բարձրաձայն, եղանակով. «Եւ ընդ Սերովբէսն եւ ընդ Քերովբէսն...», այսինքն՝ «Եւ շնորհեց, որ սերովբէսներուն ու քերովբէսներուն ձայնակցելով [քու] սրբութիւնդ երգենք ու եղանակենք, բարձրաղաղակ գոչելով եւ ըսելով»:

(Շարունակելի 10)
«ՀԱՍՎԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ»
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ,
ԿԱՌՈՅՑԻ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
ԶԱՐԵՎ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ՏԵՐ ԿԸ ԿԱՆԳՆԻ ՏԵՐ ԶՈՒՆԵԾՈՂԻՆ

«Տէր, մէկը չունիմ» (Յի 5.7): Ասիկա Բեթեզդայի անդամալոյծին պատասխանն էր ուղղուած Տիրոջ, երբ Տէրը հարցուց անոր. «Կ'ուզես առողջանալ» (Յի 5.6): Անդամալոյծը կը խորհէր որ մէկը չունէր, բայց ահա եկաւ Մէկը, որ բուն Մէկն էր, ճշմարիտ Մէկ էր: Եւ Յիսուս ինքն էր այդ մէկը. Յիսուս՝ որ չի թողուր թուղուածը. չի լքեր լքուածը. չի մոռնար մոռցուածը. չ'անտեսեր անտեսուածը. Յիսուս՝ որ կ'առանձնանայ առանձինին հետ ու կ'օրհնէ անոր առանձնութիւնը. Յիսուս՝ որ մինակին հետ մինակ կ'ըլլայ ու կը լեցնէ անոր մինակութիւնը: Ասկէ ետք չըսենք թէ մէկը չունինք, որովհետեւ ունինք Յիսուսը, որ միշտ մեզի հետ է. Մեզի հետ է մանաւանդ նեղութեանց ժամանակ, եւ ասիկա գիտնալը շատ կարեւոր է, քանի մարդիկ սովորաբար նեղութեանց ժամանակ է որ անտէր ու մինակ կը զգան: Եւ այդպէս կը զգան, որովհետեւ կը տեսնեն թէ ինչպէս ուրիշներ կը սկսին հեռանալ իրենցմէ, դրացիներ կը սկսին իրենց դռները փակել անոնց առջեւ, բարեկամներ իրենց յարաբերութիւնները անոնց հետ կը պաղեցնեն, ազգականներ անոնց վիճակը չտեսնել կը ձեւացնեն: Եւ այս բոլորին վրայ, Չարը կու գայ անոնց մէջ սերմանելու մարդոց ու Աստուծոյ կողմէ լքուած ու մոռցուած ըլլալու զգացումները, եւ ասիկա պատճառ կը դառնայ որ դժբախտ զգան: Մեզմէ ի՞նչ չի գիտեր սակայն որ զգացումը յաճախ կը խաբէ: Իրականութիւնը այն է, որ Տէրը նեղութեանց ատեն՝ անելիով մեր կողքին է, թէկուզ մենք ասիկա չզգանք:

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ
Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան

A PRAYER FOR TRUST AND REFUGE Psalm 10

I will always thank the Lord;
I will never stop praising him.
I will praise him for what he has done;
may all who are oppressed listen and be glad!
Proclaim with me the Lord's greatness;
let us praise his name together!
I prayed to the Lord, and he answered me;
he freed me from all my fears.
The oppressed look to him and are glad;
they will never be disappointed.
The helpless call to him, and he answers;
he saves them from all their troubles.
His angel guards those who honor the Lord
and rescues them from danger.
Find out for yourself how good the Lord is.
Happy are those who find safety with him.
Honor the Lord, all his people;
those who obey him have all they need.
Even lions go hungry for lack of food,
but those who obey the Lord lack nothing good.
Come, my young friends, and listen to me,
and I will teach you to honor the Lord.
Would you like to enjoy life?
Do you want long life and happiness?
Then keep from speaking evil
and from telling lies.
Turn away from evil and do good;
strive for peace with all your heart.
The Lord watches over the righteous
